



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 դեկտեմբերի 2018 թվականի N 137-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԵՐԹՈՒՂԻՆԵՐՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈՔԷԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹՅԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 1 ՆԻՍՏԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման մասին» N 762 որոշմամբ հաստատված կարգի 62-րդ կետով և համաձայն ՀՀ Սյունիքի ներմարզային երթուղիներում ընդհանուր օտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի 2018 թվականի դեկտեմբերի 17-ի նիստի N 1 արձանագրության՝

## ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. Հաստատել Սյունիքի մարզի ներմարզային երթուղիներում ընդհանուր օտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային մարզային հանձնաժողովի 2018 թվականի դեկտեմբերի 17-ի N 1 նիստի արդյունքները՝ համաձայն հավելվածի:

2. Գորիսի տարածաշրջանի ներմարզային՝ թիվ 6 «Գորիս-Խնձորեսկ» միկրոավտոբուսային երթուղու սպասարկման ժամանակավոր հատկացման ժամկետ սահմանել մեկ տարի:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Հ. Պողոսյան

**Ա Ր Ց Ա Ն Ա Ք Ի Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 1**

ՀՀ Սյունիքի ներմարզային երթուղիներում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մարզային մրցութային հանձնաժողովի

17 դեկտեմբերի 2018 թ.

ք. Կապան

2018 թվականի դեկտեմբերի 17-ին կայացավ ՀՀ Սյունիքի ներմարզային երթուղիների ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության ՀՀ Սյունիքի մարզային մրցութային հանձնաժողովի նիստ:

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի 3 անդամներ և նիստը վարում էր հանձնաժողովի նախագահի տեղակալ Ռ. Ավետիսյանը:

Օրակարգում - ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի տարածաշրջանի ներմարզային «Գորիս-Խնձորեսկ» թիվ 6 միկրոավտոբուսային երթուղու սպասարկման ժամկետը երկարաձգելու մասին:

Լսեցին - Քանի որ, լրանում է «Շահ-Նան» ՍՊԸ-ի կողմից սպասարկվող «Գորիս-Խնձորեսկ» թիվ 6 միկրոավտոբուսային երթուղու սպասարկման ժամկետը, ելնելով անհրաժեշտությունից, առաջարկվում է ղեկավարվելով ՀՀ կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման կարգը հաստատելու մասին» թիվ 762 որոշման 62-րդ կետի պահանջներով, մինչև նոր մրցույթի անցկացումն ու դրա արդյունքների ամփոփումը՝ լիազորել «Շահ-Նան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ժամանակավորապես իրականացնել «Գորիս-Խնձորեսկ» թիվ 6 միկրոավտոբուսային երթուղու սպասարկումը՝ նախկին մրցույթով արտոնագրված և դեղին հիմնագույնի համարանիշ ստացած տրանսպորտային միջոցով:

**Հանձնաժողովը որոշեց.**

1. Հինգ ընդունելով ՀՀ կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 որոշման 62-րդ կետի պահանջները՝ մինչև նոր մրցույթի անցկացումն ու դրա արդյունքների ամփոփումը, լիազորել «Շահ-Նան» Սահմանափակ պատասխանատու ընկերությանը ժամանակավորապես իրականացնել «Գորիս-Խնձորեսկ» թիվ 6 միկրոավտոբուսային երթուղու սպասարկումը՝ նախկին մրցույթով արտոնագրված և դեղին հիմնագույնի համարանիշ ստացած տրանսպորտային միջոցով:

2. ՀՀ Սյունիքի մարզպետի հաստատմանը ներկայացնել սույն արձանագրությունը:

Մրցութային հանձնաժողովի նախագահի տեղակալ

անդամներ

Ռ. Ավետիսյան

Ա. Աղաբեկյան

Ս. Ավետիսյան